Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ

Հարգելի՛ գործընկեր

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու

«Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համաշարում»

խորագրով

8-րդ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ,

որը տեղի կունենա 2026 թ. հոկտեմբերի 16-17-ին:

Գիտաժողովի նպատակները

1. Գրականագիտության, լեզվաբանության, միջմշակութային հաղորդակցության, թարգմանագիտության, լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկաների ոլորտում գիտական հետազոտությունների և գործնական աշխատանքների արդիական ու հեռանկարային ուղղությունների որոշարկում.
2. Գիտական փորձի լայն փոխանակում, գիտական և գործնական իմացությունների միահյուսման ուղիների որոնում:

Գիտաժողովի աշխատանքի ուղղությունները.

1. **Լեզվաբանություն**
   - Լեզուն՝ որպես մշակույթի հասկացույթ
   - Գենդերային լեզվաբանություն
   - Ազգալեզվաբանություն
   - Աշխարհի լեզվական պատկերը
   - Լեզվի պատմություն
   - Լեզվի հաղորդակցային հայեցակետերը
   - Կրոնական տեքստերի լեզվաբանական հայեցակետերը
2. **Գրականություն**
   - Գրականության պատմություն և տեսություն
   - Գրականությունը մշակույթի համատեքստ
   - Գրականությունը՝ որպես միջմշակութային հաղորդակցության գործոն

- Գրականությունը 20-21-րդ դարերի սահմանակետում
- Առասպելը՝ որպես գրականության նախատիպ
- Համաշխարհային գրականության համեմատական ուսումնասիրություն
- Գրական երկերի դիցաբանաստեղծական խոսույթը
- Գրականություն և կրոն
- Լրագրություն և մեդիա

3. Լեզուների և գրականության դասավանդում

- Լեզուների և գրականության դասավանդման նորարարական մեթոդները
- Լեզվական գործոնի դերը կրթական համակարգում՝ ըստ բոլոնյան
- գործընթացի
- Միջմշակութային կոմպետենցիաների կազմավորումը
- Լեզվաբանական կրթության իրազեկավորումը
- Բանասիրական գիտակարգերի դասավանդման մեթոդական հայեցակետերը

4. Թարգմանության տեսություն և գործնական թարգմանություն

- Թարգմանության մեթոդաբանություն
- Թարգմանաբանության արդի խնդիրները
- Գեղարվեստական տեքստը՝ որպես թարգմանության առարկա
- Թարգմանությունը՝ որպես միջմշակութային հաղորդակցության միջոց
- Թարգմանության լեզվաբանական հայեցակետերը

Գիտաժողովի աշխատանքային լեզուները

Հայերեն, ռուսերեն, անգլերեն

Մասնակցությունը գիտաժողովին

Գիտաժողովը նախատեսում է առկա/հեռակա մասնակցության ձևեր:

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցելու համար անհրաժեշտ է ժամանակին ներքոբերյալ նյութերն էլեկտրոնային տարբերակով ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ o.cafedra@yandex.ru

1. Դիմում-հայտ (1-ին հավելվածում ներկայացված ձևով) - մինչև 2026 թ. հուլիսի 1-ը:

2. Հոդվածը (2-րդ հավելվածում ներկայացված պահանջներով) - մինչև 2026 թ. սեպտեմբերի 15-ը:

Գիտաժողովի նյութերի հրատարակությունը

Գիտաժողովը կանցկացվի Վանաձորի պետական համալսարանում 2026 թ. հոկտեմբերի 16-17-ին, սկիզբը՝ ժամը 12^{00}-ին (մասնակիցների գրանցումը՝ ժամը 11^{30}-ին):

Տեղեկատվական հեռախոսահամարներ՝

(+374) (0322) 20917 (գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Վարդուհի Վարդգեսի Հովսեփյան),

(+374) 93-97-30-57 (հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ՝ Տարոն Ռուդոլֆի Դանիելյան - պատասխանատու քարտուղար),

(+374) 93-00-83-80 (օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ՝ Թադևոս Վրույրի Թադևոսյան - նախագահ),

(+374) 93-33-89-96 (հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. դոցենտ՝ Վալերի Ալբերտի Փիլոյան - փոխնախագահ)

Հավելված 1.

Գիտաժողովին մասնակցելու դիմում-հայտի ձևը

Անունը, հայրանունը, ազգանունը	
Գիտական աստիճանը, կոչումը	
Զեկույցի թեման	
Աշխատավայրը/ուսումնառության վայրը (լրիվ անվանումը)	
Պաշտոնը	
Հեռախոսահամար(ներ)ը	
Մագիստրանտների և ասպիրանտների համար նշել մասնագիտությունը և կուրսը	
Էլեկտրոնային փոստի հասցեն	
Հասցեն	
Համառոտագրություն (մինչև 200 բառ)	

Հավելված 2

Ներկայացվելիք նյութերի պահանջները

Հոդվածը կարելի է ներկայացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով: Ընդունվում են միայն ԱՆՏԻՊ հոդվածները: Գիտաժողովի առկա մասնակիցներին կտրամադրվեն մասնակցության վկայագրեր:

Համակարգչային ձևավորումը

Համակարգչային շարվածքը՝ Microsoft Office Word 2007 ծրագրով, A4 չափսի թղթի վրա:

Լուսանցքները՝ վերևից (Top)՝ 20 մմ, ներքևից (Bottom)՝ 25 մմ, ձախից (Left)՝ 30 մմ, աջից (Right)՝ 10 մմ:

Տառատեսակը՝ Unicode (Sylfaen):

Տառաչափը՝ 12:

Միջտողային հեռավորությունը (Line spacing)՝ 1.5:

Պարբերությունը (First line)՝ 0,75 սմ:

Չկիրառել մեկից ավել միջբառային բացակ:

Աղյուսակները, գծագրերը, նկարներն ու այլ պատկերները պետք է ունենան համարակալում. վերնագրային բացատրության տառաչափը՝ 10, թավ, շեղ (Bold, Italic): Դրանց բարձրությունը չպետք է գերազանցի 1,70 մմ-ը, լայնությունը՝ 1,10 մմ-ը: Աղյուսակների տեքստը պետք է լինի 10 տառաչափով:

Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները ներկայացվում են Microsoft Equation, շեղ, 10 տառաչափով, իսկ հիմնականները՝ մեջտեղում առանձին տողով: Դրանք կարող են համարակալվել նույն տողի աջ անկյունում՝ կոր փակագծերի մեջ՝ ():

Այն աշխատանքների համար, որոնք պարունակում են սիմվոլներ և Sylfaen տառատեսակի մեջ չկան, պարտադիր է նաև դրանց էլեկտրոնային ֆոնտը:

Առաջին էջի վերևում՝ մեջտեղում, տրվում է վերնագիրը՝ թավ գլխատառերով, հաջորդ տողում՝ անունը և ազգանունը (թավ և շեղ):

Հաջորդ տողում գրել «Հանգուցային բառեր»՝ 8-10 հանգուցային բառերով: Վերնագրում գործածված բառերը չպետք է կրկնվեն հանգուցային բառերի շարքում:

Տեքստում հղումները տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ [][1]:

Ծանոթագրությունները տրվում են էջի ներքևում՝ աճման կարգով համարակալված:

Տեքստի վերջում գրվում է «Գրականություն» բառը, հաջորդ տողից՝ գրականության ցանկը՝ համարակալված այբբենական կարգով:

Գրականության ցանկին հաջորդում են ամփոփումները՝ երկու լեզվով[2], հանգուցային բառերով: Ամփոփումները պետք է լինեն նույնական և բաղկացած լինեն 80-100 բառից:

Ամփոփման վերնագրից հետո՝ հաջորդ տողում, գրվում է անունը, ազգանունը և առանձին տողերով՝ «Ամփոփում» բառը, հանգուցային բառերը, ամփոփման տեքստը՝ համապատասխան լեզվով:

Հոդվածի ծավալը՝ 6-12 էջ:

---

[1] Օրինակ՝ [5, 60], 8, [136-151], որտեղ 5-ը և 8-ը գրականության ցանկի համապատասխան համարներն են, իսկ 60-ը, 136-151-ը՝ համապատասխան էջերը:

[2] Եթե տեքստը հայերեն է, ամփոփումները ներկայացվում են նախ՝ ռուսերեն, ապա՝ անգլերեն, եթե ռուսերեն է, նախ՝ հայերեն, ապա՝ անգլերեն, եթե անգլերեն է, նախ՝ հայերեն, ապա՝ ռուսերեն: Օտարերկյա հեղինակների հոդվածների հայերեն ամփոփումները կազմում է խմբագրական խորհուրդը:

Թղթային տարբերակով ուղարկելիս պարտադիր է հեղինակի ստորագրությունը առաջին և վերջին էջերին:

Գրագողությունը բացառելու համար հոդվածները կտպագրվեն միայն հատուկ փորձաքննություն անցկացնելուց հետո:

Եթե հոդվածի հեղինակը ասպիրանտ կամ մագիստրանտ է, ապա անհրաժեշտ է գիտական ղեկավարի երաշխավորագիրը:

Օդանավակայանից համալսարան և համալսարանից օդանավակայան փոխադրում նախատեսված չէ:

Գիտաժողովի մասնակիցներին կուղարկվի գիտաժողովի նյութերի ժողովածուի էլեկտրոնային և գրքային տարբերակները:

Կազմակերպական հանձնաժողովի հասցեն՝

ՀՀ, ք. Վանաձոր,

Տիգրան Մեծի 36,

Կազմակերպական հանձնաժողովի նախագահ՝ Վարդուհի Վարդգեսի Հովսեփյան